ապրուստի և կառավարութեան վրայ են մտածում և պատրաստում, նոր են լսում ուսումն և ուսումնարան բառերը և զգում ուսման կարեւորութիւնը, ինչպէս և դաւառի բոլոր գիւղերը, ուրեմն համբերութեամբ պէտք է աշխատենք, որ կարողանանք գիւղացւոց բան հասկացնել։ Այս է որ՝ հազիւ երկու գիւղ դպրոց ունի, այն է Գիրք և Ղալակայ և հազիւ այս երեք տարւայ մէջ, կարողացանք Գանձակ գիւղում դպրոց բանալ, և այն օժանդակութեամբ Թօփիշէնցի Բագուարնակ, պ. Հայրապետ Քօշարեանցի։ Չեմ հաշւում Սաղիանի վանական դպրոցը, որ շնորհիւ Բուդաղեանց յարգոյ եղբարց է բացուել, և Մատրասայ գիւղինը, որ հինգ վեց հարիւր տուն Հայ են և քաղաքի մօտ լինելով՝ անշուշտ պէտք է դպրոց ունենային, թէ և Մատրասեցիք եւս անտարբեր են դէպ ի դպրոցը, և անփոյթ իրենց որդոց կրթութեանը[1]։

Վերջապէս ժամանակիս պէտքն ու պահանջը ստիպում է ամենին, նոյնպէս և Հայերին, որ կրթեն և պատրաստեն որդիքը ուսմամբ, և արհեստով, որպէս զի՝ ընկերից և դրացիից յետ չմնան ամեն բանի մէջ, և անշուշտ այսպէս եւս հարկաւոր է, Աստուած տայ ամենին շնորհք իրենց գործը, պարտքը և իրաւունքը ճանաչել և ըստ այնմ վարուել և կառավարուել։

[1]) Մատրասցիք եւս շնորհիւ նորընտիր Հոգաբարձու Անլան բէկի Խաչանեանց և մեծապատիւ Կարապետի Առաքելեանց Նախիջեւանցւոյ 1893 թուիցը ուշ են դարձրել դպրոցի վրայ և աշխատում են օրիորդաց դպրոց եւս բանալ, որոյ շինութիւնը սկսել են արդէն։